

## ՍՈՒՐԻԱ ԻՐ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆԸ ԲԵՐԱԿՄԱԿ-Ի 78-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԲԱՐՉՐ ՄԱԿԱՐԱԿԻ ԲՆՆԱՐԿՄԱՆ ԺՈՂՈՎՆԵՐՈՒՆ



Սուրիոյ Զանրապետութեան մասնակցութեամբ Նիւ Եորքի մէջ սկիզբ առին ՄԱԿ-ի ընդհանուր միութեան 78-րդ շրջանի 1 շաբթուան բարձր մակարդակի քննարկման ժողովները, ուր ՄԱԿ-ի անդամ պետութիւնները պիտի քննարկեն իրենց երկիրներուն ազգային տուեալները:

Ընդհանուր քննարկման ժողովը կ'ընդգրկէ նաեւ ՄԱԿ-ի մօտ Սուրիոյ Զանրապետութեան մնայուն բանազնաց Պասսամ Սապպաղի խօսքը: Սապպաղ իր կարգին հանդիպումներ պիտի ունենայ ՄԱԿ-ի պատասխանատուներու եւ ԱԳ Նախարարներու հետ, ինչպէս նաեւ պիտի մասնակցի Նիւ Եորքի մէջ գազաթնաժողովներու եւ այլ գործունէութիւններու:

## ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱՏ ԵՒ ԱՌԱՋԻՆ ՏԻԿԻՆԸ ԳԻՆԱՍՏԱՆ ՊԻՏԻ ԱՅՅԵՆԵՆ

Ընդառաջելով Չինաստանի Նախագահ Շի Ճին Պեյնի պաշտօնական հրաւերին, Սուրիոյ Նախագահ Պաշար ալ-Ասատ եւ Առաջին Տիկին Ամա ալ-Ասատ պաշտօնական այցելութեամբ Չինաստան պիտի մեկնին Զինգշաբթի, 21 Սեպտեմբեր 2023-ին: Այցելութիւնը պիտի ընդգրկէ գանազան հանդիպումներ Խանճօ քաղաքին եւ Փեքին մայրաքաղաքին մէջ:

Նախագահին պիտի ընկերակցի քաղաքական եւ տնտեսական պատուիրակութիւն մը: Նախագահ Ասատ գազաթնաժողով պիտի ունենայ Չինաստանի Նախագահին հետ եւ Զանկչօ քաղաքին մէջ տեղի ունենալիք ասիական խաղերուն 19-րդ շրջանի բացման հանդիսութեան հիւր պիտի գտնուի:



## ԱՏՐՊԵՅՃԱՆ ԱԶԱԲԵԿՉԱԿԱՆ ՅԱՐՉԱԿՈՒՄԻ Կ'ԵՆԹԱՐԿԵ ԱՐՃԱՆԻ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ՝ ՊԱԶԱՆՁԵՆՈՎ ԶԱՅԿԱԿԱՆ ԶԻՆԵԱԼ ՈՒԺԵՐՈՒ ԶԻՆԱԹԱԹՈՒՄԸ ԵՒ ՎԱՐՉԱՎԱՐԳԻ ԼՈՒՏԱՐՈՒՄԸ

Ատրպեյճանի Պաշտպանութեան Նախարարութիւնը 19 Սեպտեմբերին յայտարարեց, որ Ղարաբաղի մէջ «հակահարձակական գործողութիւններ»-ու կը սկսի՝ նպատակ ունենալով ի միջի այլոց նաեւ «վերականգնել Ատրպեյճանի Զանրապետութեան սահմանադրական կարգը»:

«Ղարաբաղի տնտեսական շրջանին մէջ լայնածաւալ սարդանքները ճնշելու, հայկական զինուած ուժերու զինաթափումն ու մեր տարածքներէն դուրս բերումը, ռազմական ենթակառուցները չեղքացնելու, բռնագրաւումէն ազատագրում տարածքներ վերադարձող քաղաքային բնակչութեան, շինարարական վերականգնողական աշխատանքներու մէջ ներգրաւում քաղաքային ծառայողներու եւ մեր զինուորականներու անվտանգութիւնը ապահովելու, ինչպէս նաեւ Ատրպեյճանի Զանրապետութեան սահմանադրական կարգը վերականգնելու նպատակով, շրջանին մէջ սկսած են տեղական բնոյթի հակահարձակական միջոցառումներ», ըսուած է Ատրպեյճանի Պաշտպանութեան Նախարարութեան յայտարարութեան մէջ:

Պաքուն յայտարարեց, թէ «շրջանին մէջ խաղաղութեան համար անհրաժեշտ է հայկական զինեալ ուժերու ամբողջական դուրս բերումը Ատրպեյճանի Ղարաբաղի շրջանէն»:



Յայտարարութեան մէջ կը յիշուի նաեւ, որ ատրպեյճանական կողմը իր գործողութիւններուն մասին տեղեկացուցած է Ռուսիոյ Դաշնութեան խաղաղապահ զօրախումբի հրամանատարութիւնը եւ թուրք-ռուսական դիտորդական կեդրոնի ղեկավարութիւնը:

Ատրպեյճան առաւօտեան հաղորդեց, թէ Ահմետայէլի-Ֆիզուլի-Շուշի ճանապարհի հատուածին մէջ Արցախի պաշտպանական բանակին կողմէ տեղադրուած հակահրետանային ականի պայթիւնի հետեւանքով մահացած են ինքնաշարժի մէջ գտնուող 2 քաղաքային անձեր, որոնք այդ տարածքին մէջ ելեկտրականութեան սարքաւորման աշխատանքներ կը կատարէին: Քանի մը ժամ ետք Պաքուն հաղորդեց այլ պայթիւնի մը մասին, այս անգամ ալ պնդելով, թէ «ահաբեկութեան» հետեւանքով մահացած են Ատրպեյճանի Ներքին գործոց Նախարարութեան 4 աշխատակիցներ:

Պաշտօնական Ստեփանակերտը հերքեց Պաքուի պնդումները: Ատրպեյճան Նոյն օրը գանգուածային զինուորական յարձակում սկսաւ Արցախի դէմ՝ իր գործողութիւնները որակելով տեղական «հակահարձակական քայլերու» մեկնարկ:

Միւս կողմէ, Ատրպեյճանի Նախագահի օգնական Զիքմետ Զաճիւ, մեկնաբանելով Արցախի դէմ Պաքուի զինուորական յարձակումը, յայտարարեց.

«Իրադարձութիւններուն մասին հայ բնակչութիւնը զգուշացուած է «Էս.Էմ.Էս.» հաղորդագրութիւններու միջոցով»:

Արցախի Զանրապետութեան Պաշտպանութեան Նախարարութիւնը յայտարարեց, որ ժամը 13:00-ի սահմաններուն մէջ ատրպեյճանական զինուոր շփման գիծի ամբողջ երկայնքին խախտած է հրադարձող հասցնելով իր թիւերէն անախիւս հարուածներ: Արցախի պաշտպանութեան Նախարարութիւնը նաեւ դիտել տուաւ, որ ատրպեյճանական զինուոր իրականացնելով իր թիւերէն անախիւս խախտումները կը փորձէ յառաջանալ Արցախի պաշտպանութեան բանակի պաշտպանութեան խորքը:

«Արցախի պաշտպանութեան բանակի զօրքերը կը ցուցաբերեն յամառ դիմադրութիւն», յիշուած էր հաղորդագրութեան մէջ:

Իր կարգին, Արցախի Զանրապետութեան Արտաքին գործոց Նախարարութիւնը յայտարարեց, որ Արցախի Զանրապետութեան քաղաքացիներու շրջանակին մէջ կան բազմաթիւ գոհեր եւ վիրաւորներ, որոնք շարքին՝ երեխաներ: Երեկոյեան Արցախի մարդու իրաւունքներու պաշտպան Գեղամ Ստեփանեան յայտարարեց, որ վերջին տուեալներով Ատրպեյճանի կողմէ իրականացուած ահաբեկական յարձակումին պատճառով արձանագրած են 25 զոհ եւ 138 վիրաւորներ:

Պաշտօնական Երեւանը խստօրէն դատապարտեց Ատրպեյճանի կողմէ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ Նախայարձակումը:

Արցախի Զանրապետութեան Արտաքին գործոց Նախարարութիւնը յայտարարեց, որ Ատրպեյճան կը շարունակէ Արցախի/Լեռնային Ղարաբաղի ցեղային գտումները՝ բռնի ուժով ստիպելով 120 հազար բնակչութեան լքել իրենց տունը:

Արցախի վրայ Ատրպեյճանի սանձազերծած լայնածաւալ յարձակումին եւ ի տես այս իրականութեան Զայաստանի իշխանութիւններուն անգործութեան պատճառով 19 Սեպտեմբերի երեկոյեան Երեւանի մէջ կատարուեցան բազմամարդ ցոյցեր: Կառավարութեան շէնքի մօտ «Մայր Զայաստան» դաշինքի ղեկավար, Ազգային ժողովի Նախկին պատգամաւոր Անդրանիկ Թեւանեան յայտարարեց, որ քաղաքական ուժերը պետք է նախաձեռնեն վարչապետ Նիկոլ Փաշինեանի հեռացման գործընթաց:

Բազմաթիւ մարդիկ հաւաքուեցան նաեւ Ռուսիոյ դեսպանատան մօտ, անոնք յայտարարեցին, որ գործողութիւններ կը պահանջեն Արցախ խաղաղապահներ ուղարկած Մոսկուայէն:

Տեղական Լրագրող

Խմբագրական

ՌՎ ԿՈՐՈՇԷ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՄԸ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Արցախի բնակչությանը ինչ ամիս սովի ենթարկելով, ապա անոր վրայ լայնածալալ յարձակում գործելով Ատրպեյճան բռն- նի ուժով պարտադրեց Արցախի ժողովուրդը ենթարկուելու իրեն ու ոտնահարեց անոր ինքնորոշման իրաւունքը:

Այդ իրաւունքը արհամարհեց Նաեւ Հայաստանի վարչա- պետը, երբ անտեսելով Արցախի ժողովուրդին երեսուն տա- րուան տքնանքն ու անկախ պետականութիւն կերտելու բազում զոհողութիւնները, Արցախը ճանչցաւ որպէս Ատրպեյճանի մաս:

Մինչդէռ ժողովուրդ մը, համաձայն միջազգային օրէնքին, մարդկային իրաւունքներուն, ի՛նք կ'որոշէ, թէ ինչպէ՛ս կը տես- նէ իր ապագան, ի՛նք կը կերտէ զայն եւ ոչ մէկ ուժ իրաւունք ունի պարտադրելու ազատատենչ ու պետականութեան 30 տարուան ճամբայ կերտած ժողովուրդին ապրիլ այլ ուժի լու- ծին տակ:

Արցախի հարցը Ատրպեյճանի յարձակումով պիտի փա- կուի՞, կրնա՞յ փակուիլ, երբ արցախցիներուն արիւնով ներկուած են Ստեփանակերտի, Շուշիի, Մարտունիի, Մարտակերտի եւ ողջ արցախեան տարածքներու հողերը:

Ուժի կիրառումով այո՛ կրնան կացութիւններ պարտադ- րել ժողովուրդի մը, ցեղասպանութիւն գործել համայն աշխար- հին աչքին առջեւ եւ անոր մեղսակցութեամբ, սակայն ինչպէ՞ս կրնան պատմութեան անիւր ետ դարձնել ու սովետական օրե- րու կարգավիճակ պարտադրել ժողովուրդի մը, որ յար եւ նման սովետական տարբեր հանրապետութիւններու ժողո- վուրդներուն ի՛ր ազատութիւնն ու անկախ ապրելու ճամբան կերտեց ի՛ր իսկ արիւնով:

Անձնատուութեամբ ինչպէ՞ս կարելի է հայրենիք պահել, երբ բոլորս ականատեսն ու ականջալուրդ եղանք ոչ միայն բռն- նապետ Ալիեւի, այլեւ Էրտողանի Չանգեզուրի միջանցքին հասնելու մտադրութեան: Միթէ յստակ չէ՞ մեզմէ շատերուն թուրանական ծրագիրը բռնապետներու, որոնք ուժով, զէնքով ու քարիւղով կ'ոտնահարեն ոչ միայն ժողովուրդներ, այլեւ ինք- նիշխան երկիրներու տարածքներ:

Յաւօք արցախահայութիւնը առանձին մնաց ռումբին ու թնդանօթին դիմաց, ո՛չ խաղաղապահ ուժերը, ո՛չ մարդկա- յին իրաւունքներու անունով հանդէս եկողները խօսքէն անդին անցնելով քայլ մը առին: Արցախահայութիւնը պայքարեցաւ ի՛ր ազատութեան համար մինչեւ վերջ, ինքնազոհութեամբ գո- յամարտ մղեց ու փակեց արդարութեան եւ մարդասիրութեան կեղծ խոստումներու էջը՝ հաստատելով որ միայն ուժով կա- րելի է կացութիւն պարտադրել:

Մեր ազգին դամոկլեան սուրի նման կը սպառնայ ու պի- տի սպառնայ ատրպեյճանաթրքական պատուհասը, որ Ար- ցախի կորուստով եկաւ հասաւ Հայաստանի սահմանին:

Կը մնայ յուսալ, որ այս պարտութեամբ մեր ազգին գոյա- պայքարը վերջ չի գտներ ու անձնատուութեամբ խաղաղ ապ- րելու հաւատացողներուն թաւալգլոր անկումը կը կասեցուի:


21 Սեպտեմբերին Հայաստանի վերանկախացման տօնը կը յիշատակենք հաւատալով, որ համայն հայութեան հայրե- նիքը զօրացնող ու թշնամական ախորժակներուն դիմաց ու- ժեղ բանակի, անկոտորում ժողովուրդի եւ ազգային ռազմա- վարութեան հեռահար նպատակներու իրականացման հաւա- տացող քաղաքական գործիչներ ու դիւանագետներ կը ստանձ- նեն մեր հայրենիքին դէկը վերջապէս ու յուսահատութենէն դե- պի աշխատանք եւ հզօրացում կ'առաջնորդեն Հայաստանն ու հայ ժողովուրդը:

«Գ.»

- Ստոյգ աղբիւ- րներ հաղորդեցին, որ Ս Ե Ն Լ տակաւ Արաբիան վիզա կը տրամադրէ սու- րիացի դիւանագետ- ներուն՝ որպէս նախա- պատրաստական քայլ Ռիատի մէջ սու- րիական դեսպանա- տան բացումին:



- Տեղեկատուական աղբիւրներ հաղորդե- ցին, որ Չինաստան յատուկ հետաքրքրութիւն կը ցուցաբերէ նախագահ Ասատին Չինաստան այցելութեան գծով, որուն ընթացքին նախագահ Ասատ քաղաքական եւ տնտեսական հանդի- պումներու պիտի մասնակցի՝ յանուն Սուրիոյ եւ Չինաստանի յարաբերութիւններու զարգաց- ման, յատկապէս, որ Չինաստան Միջին Արեւել- քի եւ աշխարհի մէջ հիմնական դերակատար դարձաւ:



- Իրանի արտաքին գործոց նախարար Հոսէյն Էմիր Ապտուլլահեան յայտնեց, որ Թեհրան Անգարայի եւ Դամասկոսի առաջարկ ներկայացու- ցած Է Սուրիոյ հիւսի- սային բաժինէն թրքա- կան ուժերը դուրս բե- րելու համար:



Ապտուլլահեան աւելցուց. «Առաջար- կեցինք, որ Թուրքիա նախ իր զինուորական ուժերը դուրս բերէ սուրիական հողերէն: Երկրորդ՝ սուրիական ուժերը պիտի մնան սահմաններուն վրայ, որպէսզի թրքական հողերը վտան- գիչ չ'ենթարկուին, իսկ Իրան եւ Ռուսիա կը հովանաւորեն այս համաձայ- նութեան իրականացումը»:

- Սուրիոյ Բարձրագոյն Կրթութեան Նախարարութիւնը յայտարարեց, որ 2023-2024 համալսարանական ուսումնական տարեշրջանի նախընտ- րելի ճիւղեր դիմելու արձանագրութիւնները առցանց դարձան: Հետեւաբար սուրիա- կան տարբեր նա- հանգներու կամ այլ երկիրներու մէջ գտնուող սուրիացի, լոյն- իսկ արաբ կամ օտար ուսանողներ, ներառ- եալ նահատակներու եւ վիրաւորներու զաւակներ, արեւելեան շրջաններու մէջ գտնուող ուսանողներ եւ համալսարանական դասատու խորհուրդի զա- վակներ կրնան առցանց արձանագրուիլ նախարարութեան ճշդած հարթա- կին միջոցով, առանց կարիք ունենալու արձանագրութեան կեդրոններ այ- ցելելու:



Նախարարութիւնը աւելցուց, որ լոյն հարթակին միջոցով ուսանողը կրնայ մէկէ աւելի անգամներ արձանագրուիլ, վերատեսութեան ենթարկե- լով իր նախասիրած ճիւղերուն ցանկը, պայմանաւ որ վճարէ ուսման վարձ- քը ելեկտրոնային հարթակով:

-Սլովաքիան պարբերական մը յայտնեց, որ աշխարհի մէջ գոյութիւն ունին տասնեակներու հասնող հնութիւններ, որոնք հազարաւոր տարիներու կենսք ու- նին, սակայն ամենէն յատկանշականը Հա- լէպի եւ Դամասկոսի հնութիւններն են:



Պարբերականը նշեց, որ մարդ արա- րածը Հալէպի մէջ կայք հաստատած է ՆՔ 6000 թուականին, քաղաքը ոսկեդարը ապրած է մետաքսեայ ճամբուն յայտնաբերումով 12-15-րդ դարերուն:

# Լուրեր Հայաշխարհին

## ԱՐՃԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ. «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐՈՒ ԼՂ ՇՐՋԱՓԱԿՈՒՄԸ ԳԵՂԵԱԼ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՒ ՃԵՂԱՄՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՉԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԱԳ ԼՈՅՍ ՎԱՌԵՑ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՀԱՄԱՐ»

Արցախի Արտաքին Գործոց Նախարարությունը յայտարարություն տարածած է յայտնելով, որ միջազգային դերակատարներու՝ ԼՂ շրջափակումը չեղելու համարելու եւ ցեղասպանությունը կանխելու ծախսողումը կանաչ լույս վառած է Ատրպեյճանի համար՝ ռազմական յարձակում սկսելու շրջափակման մեջ գտնուող 120 հազար արցախցիներու դեմ:

Ինչպես տեղեկացուցած էինք՝ Ատրպեյճան կը ռմբակոծէ Արցախը, այդ կարգին՝ Ստեփանակերտը: Զաղաքին մեջ օդային տագնապ յայտարարուած է: Յարձակման մասին կը յայտնեն թե՛ տեղւոյն բնակիչները, թե՛ պաշտօնական Պաքուն: Ատրպեյճանի Չինուած ուժերու տարածած հարցը-



Լեռնային Ղարաբաղ

դագրութեամբ՝ Պաքուն խաղաղ բնակչութեան հրետակոծությունը կ'անուանէ «հակահարձակական գործողություն», որուն նպատակը «Սահմանադրական կարգի վերականգնումն» է ընդգծելով, որ գործողութեան մասին տեղեկ պահած են ռուս խաղաղապահները եւ ռուս-թրքական դիտորդական կետրոնի ղեկավարությունը:

Արցախի Պաշտպանութեան Նախարարութենէն յայտնած էին, որ 19 Սեպտեմբերին՝ ժամը 13:00-ի սահմաններուն մեջ, ատրպեյճանական զինուած ուժերը շփման գիծի ամբողջ երկայնքին խախտած են զինադադարը՝ ուղղելով հրթիռահրետանային հարուածներ:

Արցախի բնակիչները տարածած են տեսանիւթեր, որոնց մեջ կը լսուին հրետակոծութեան՝ անօդաչու թռչող սարքերու աշխատանքի ձայներ, Ստեփանակերտի մօտակայ բարձունքներուն վրայ տեղի կ'ունենան պայթումներ:

## ՀԱՅ ՂԱՏԻ ԵՐՈՂԱՅԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ՆԱՄԱԿԸ ՇԱՌԼ ՄԻՇԷԼԻՆ. ԵՄ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՄԻԱՅՆ ԿԸ ԽՐԱՆՈՒՄԷ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԲՈՆԱՏԻՐԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԸ

News.am-ը թարգմանաբար կը ներկայացնէ ՀՀԴ Հայ Դատի Եւրոպայի գրասենեակի նախագահ Գասպար Կարապետեանի բաց նամակը՝ Եւրոպական խորհուրդի նախագահ Շառլ Միշելին:

Արցախի բնիկ հայ բնակչութեան նկատմամբ կիրարկուած սովն ու անաչին անհրաժեշտութեան ապրանքներու ապահովման արգելքը ինը ամիս որպէս ցեղային գտնումներու միջոց օգտագործել է տեղ, Ատրպեյճան այժմ սկսած է ահաբեկել եւ ռմբակոծել 120.000 մարդու, այդ կարգին՝ 30.000 մանուկներու: Այսօր անաւտեան ժամերէն Ատրպեյճան ծանր հրետանիով կը գնդակոծէ մայրաքաղաք Ստեփանակերտը:



Ալիեի վարչակարգը բռնապետական, ֆաշիստական վարչակարգ է, որ կ'օգտագործէ Նոյն ձեռագիրը, ինչպէս միւս բռնապետները: Ուստի անհրաժեշտ է դադարեցնել այս ոճիրը՝ օգտագործելով վճռական արդիւնաւետ միջոցներ: Հակառակ պարագային, միջազգային հանրութիւնը, Ներառեալ ԵՄ-ը, որպէս հիմնական բանակցող, պատասխանատուութիւն կը կրէ Լեռնային Ղարաբաղի մեջ Ատրպեյճանի ցեղասպան քաղաքականութեան եւ անոր ոչ համարժեք արձագանգին համար:

Անկախ փորձագետներու եւ միջազգային իրաւապաշտպան կազմա-

## ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՈՉ ԱՅԼԻՆՉ ԵՆ, ՔԱՆ ՃԵՂԱՅԻՆ ՉՏՈՒՄ ԵՒ ՃԵՂԱՄՊԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Անգամ մը եւս խախտելով 9 Նոյեմբեր 2020-ի եռակողմ յայտարարու-

թիւնը՝ Ատրպեյճան 19 Սեպտեմբերին լայնամասշտապ զինուորական գործողություններ սկսած է Արցախի Հանրապետութեան նկատմամբ՝ թիրախաւորելով նաեւ քաղաքացիական տուեալներն ու խաղաղ բնակչութիւնը, որուն հետեւանքով կան գոհեր եւ վիրաւորներ՝ կիներ, տարեցներ եւ երեխաներ: Ատրպեյճանի գործողությունները ոչ այլ ինչ են, քան ցեղային գտում եւ ցեղասպան քաղաքականութիւն, զորս իրականացնելով Պաքուն կը շահարկէ մարդկային միջանցքի եւ մարդասիրութեան այլ կեղծ օրակարգեր: Արցախի Հանրապետութեան նախագահ Սամուէլ Շահրամանեան անմիջապէս հրաւիրած է Անվտանգութեան Խորհուրդի նիստը եւ քննարկած ստեղծուած իրավիճակն ու հետագայ ընելիքները: Նկատի առնելով հազարաւոր մարդոց կեանքին ու անողջութեան սպառնացող վտանգը՝ պաշտօնական Ստեփանակերտը կը կ'ուղղէ միջազգային դերակատարներուն եւ շահագրգիռ բոլոր կողմերուն անյապաղ ձեռնարկելու անհրաժեշտ բոլոր միջոցներուն՝ Արցախի նկատմամբ յարձակումը դադարեցնելու համար: Արցախի Հանրապետութիւնը մշտապէս եղած է խաղաղ կարգաւորման կողմնակից եւ կը վերահաստատէ իր պատրաստակամութիւնը՝ բոլոր հարցերու լուծման համարելու բանակցություններու միջոցով:



Այն նախագահի աշխատակազմի տեղեկատուութեան գլխավոր վարչություն

## ՂԱՐԱՔԱՂԵԱՆ ԿՈՂՄԸ ԿԸ ԴԻՄԷ ԱՏՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ԿՈՂՄԻՆ՝ ՆԱՏԵԼՈՒ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԵՂԱՆԻ ՇՈՐՋ



19 Սեպտեմբերի յետմիջօրէին, դարաբաղեան կողմը կը դիմէ ատրպեյճանական կողմին՝ անյապաղ դադարեցնելու կրակը եւ ստեղծուած իրավիճակը հանգուցալուծելու նպատակով լստելու բանակցություններու սեղանի շուրջ:

Արցախի տեղեկատուական շտապ

Կերպուքիւններու բազմաթիւ զեկոյցներ եւ յայտարարություններ կը զգուշացնեն Լեռնային Ղարաբաղի մեջ ցեղային գտումներու Ատրպեյճանի շարունակական քաղաքականութեան եւ անոր ցեղասպանական եութեան մասին: Միջազգային քրեական դատարանի նախկին գլխավոր դատախազ Լուիս Մորենս Օքամփօ վերջերս իր զեկոյցով կը պնդէ, որ կայ «ողջմիտ հիմք» եկադրելու, որ Ատրպեյճան ներկայիս ցեղասպանութիւն կ'իրականացնէ Արցախի բնիկ հայ բնակչութեան դեմ: Յեղասպանութեան կանխարգիլման Լեմբինի ինստիտուտը, Genocide Watch-ը Նոյնպէս քանի մը ահագանգեր տարածած է այս ծանր իրավիճակին մասին:

Միջազգային իրաւունքի սկզբունքները չեն ստեղծուած, որ օգտագործուին որպէս գործիք՝ նպաստելու ցեղային գտումներու կամ բնակչութեան դեմ վայրագություններ իրականացնելու: Այնուամենայնիւ, Ատրպեյճան կը չարաշահէ տարածքային ամբողջականութեան սկզբունքը՝ որպէս պատրուակ, ցեղային գտումներ իրականացնելու եւ բնիկ հայ բնակչութիւնը սեփական հայրենիքէն վերացնելու համար: Մարդու իրաւունքներու եւ կեանքի գնով Ատրպեյճանի տարածքային ամբողջականութեան աջակցելու ԵՄ դիրքորոշումը միայն կը խրախուսէ Ատրպեյճանի բռնատիրական վարչակարգը՝ հայերու նկատմամբ դաժան ճնշման քաղաքականութիւնը:

Որպէս համաեւրոպական համայնքային կազմակերպութիւն՝ Հայ Դատի Եւրոպայի գրասենեակը եւ անոր ԵՄ անդամ 14 երկիրներու յանձնախումբերը կը գնահատեն ձեր ջանքերը՝ որոնք, այս խիստ բարդ իրավիճակին մեջ ուղղուած են միջնորդական ջանքերուն: Այնուամենայնիւ, որպէս ԵՄ քաղաքացիներ, մենք կ'անկեղծաբար եւ կը պահանջենք վճռական միջոցներ՝ Ատրպեյճանը զսպելու համար: Մենք ուշադիր պիտի հետեւինք իրադարձություններու զարգացման:

## ԱՐԴԵՕՔ ԿԱՐԵՒՈՐ ԵՆ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒՔԻՆՆԵՐԸ

Վերադառնալով սկզբնական հարցումին՝ թե՛ ինչպիսի՞ տեղ պիտի գրաւեն մեր պատանեկան միութիւնները մեր կառուցի տարբեր բաժիններուն մէջ, եւ որո՞նք պիտի զբաղին պատանեկան միութիւններով, կը հաստատենք, որ ամենակարեւոր տեղը պիտի գրաւեն անոնք եւ մեր կազմակերպական կառուցի բոլոր բաժինները, իւրաքանչիւրը իր հնարաւորութիւններով եւ կանոնադրի ճշդած սահմաններով, պիտի զբաղին պատանեկան միութիւններու բարելաման ու յառաջդիմութեան ծրագիրներով եւ նորարարութեան հետ հաւասար քայլեր պահելու գործընթացով: Սանձարձա-



կութիւններէ հեռու, սակայն, նիւթական, թե՛ բարոյական խնայողութիւնը երբեք տեղ պիտի չ'ունենայ պատանեկան միութիւններու ծրագիրներու իրագործման մէջ:

Այսօրուան դրութեամբ մօտաւորապէս երկու տասնեակ երկիրներու մէջ կը գործեն պատանեկան միութիւններ: Այս միութիւններու աշխատանքային տարողութիւնը, աշխուժութիւնը, ծրագրաւորումը, թուային պատկերը իրարմէ կը տարբերին: Համապատանեկան ծրագիրներով կը զբաղի ՀՅԴ Բիւրոյի երիտասարդական գրասենեակը: Ան այս աշխատանքին առաւել կարեւորութիւն ընծայելու համար յառաջացուցած է պատանեկան հարցերու յանձնախումբ, որ կը գործէ անելի քան հինգ տարիէ ի վեր: Այս ժամանակամիջոցին գրասենեակը պատանեկանի ոլորտէն ներս իրագործած է շարք մը կարեւոր ծրագիրներ ինչպէս.

ա. Մշակուած եւ ՀՅԴ պատանեկան միութիւններուն տրամադրուած է ՀՅԴ պատանեկան միութիւններու ուղեցոյցը:

բ. Կազմակերպուած են ՀՅԴ պատանեկան միութիւններու վարիչներու պատրաստութեան տարածաշրջանային (Եւրոպա, Ամերիկաներ եւ Գաւառային Միջին Արեւելք) առցանց դասընթացները:

գ. Պատրաստուած է պատանեկան միութիւններու կազմակերպչական եւ դաստիարակչական իրավիճակին, անոնց դիմագրաւած դժուարութիւններուն եւ գրասենեակէն սպասած ակնկալութիւններուն մասին հարցարան: Հարցարաններու լրացումներու հիման վրայ պատրաստուած է պատասխաններու ամփոփումի ու եզրակացութեան սերտողութիւն:

դ. Հետեւողականօրէն կապ հաստատուած է ՀՅԴ պատանեկան միութիւններու ընդհանուր վարիչ մարմիններուն հետ եւ տարբեր օրակարգերով հանդիպումներ գումարուած է անոնց հետ:

ե. Պատրաստուած է ՊՄՇՎՄ-ի տեղեկատուական լրատու (whatsapp-ի խումբ):

զ. Փորձառութիւններու փոխանակման միտումով Արցախէն (Մարտունի եւ Ստեփանակերտ) երկու ընկերներու Սուրիա գործուղուելու համապատասխան նախագիծ մշակուած է գործադրուած է:

է. Մշակուած եւ պատանեկան միութիւններու ընդհանուր վարիչ մարմիններուն տրամադրուած է անդամահաւաքի յատուկ նախագիծ:

ը. Կազմակերպուած է պատանիներու շնորհքներու եւ հմտութիւններու յայտնաբերման «ՊԱՏԱՆԻ ԱԽՈՅԵԱՆԸ» մրցաշարը:

թ. Նախաձեռնուած է «Պատանիի աշխարհը» պատանեկան համահայկական պարբերաթերթի հրատարակութիւն:

ժ. Նախաձեռնուած է պատանիներու պատրաստութեամբ ու մատուցմամբ դասախօսական առցանց ձեռնարկ:

ժա. Կազմակերպուած է ընդհանուր վարիչ մարմիններու, երիտասարդական եւ ուսանողական միութիւններու վարչութիւններու ներկայացուցիչներու համագումար:

ժբ. Եւ յարակից ու ընթացիկ այլ աշխատանքներ:

Թե՛ն պատանեկան միութիւններու գործը երկար ժամանակ պահանջող, անխոնջ ջանք սպառող, ծով համբերութեան կարօտող աշխատանք է,

**Մարիա Գաբրիէլեան**  
**Փաստաբան, լրագրող,**  
**Հայագիտական ուսուցման դասախօս**  
**«Դրօշակ» թիւ 8, 2023թ**  
**Շաբ.՝ էջ 9**

## ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ ՄԵԾ ՇՈՒՔՈՎ ՅԻՇԱՏԱԿՈՒԵՑԱԲ ԽԱՉՎԵՐԱՅ ՏՕՆԸ

Խաչվերացը Հայ եկեղեցւոյ հինգ տաղաւար տօներէն վերջինն է, որ կը յիշատակէ գերութենէն խաչի վերադարձը եւ փառաբանութիւնը:

Արդարեւ, հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մակար Եպս. Ազգարեանի, Ուրբաթ 15 Սեպտեմբեր 2023-ին, Դամասկոսի «Չաւարեան» համալիրէն ներս մեծ շուքով յիշատակուեցաւ խաչվերաց տօնը:

Օրուան տօնախմբութիւնը իր ներկայութեամբ պատուեց Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մակար Եպս. Ազգարեան:

Սրբ. հայրը եւ իրեն ընկերակցող պատուիրակութիւնը ջերմապէս դիմաւորուեցան «Ահարոնեան»-ի կեդրոնի վարչութեան, միութիւններու վարչութեանց, Ազգ. Միացեալ Ճեմարանի Հոգաբարձութեան, տնօրէնութեան եւ հայորդիներու հոծ բազմութեան կողմէ:

Պատուիրակութեան մաս կը կազմէին Բերիոյ Թեմի Յարաբերական Մարմնի պատասխանատու Վրէժ Եագուպեան, Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան Ժիրայր Ռէիսեան, Բերիոյ Թեմի Ազգային Ժողովի ատենապետ մեթր Սունսպուլ Սունսպուլեան եւ Տէր Չօրի եկեղեցւոյ ներկայացուցիչ Սուրբ Վարդանեան:

ՀԱՄՍ-ի փողերախումբի կատարողութեամբ հնչեցին Սուրիոյ, Հայաստանի քայլերգները, ապա Կիլիկիա մաղթերգը:



Կահայութեան:

«Ահարոնեան» կեդրոնի խօսքը արտասանեց կեդրոնի վարչութեան ներ-

Օրուան հանդիսավարներն էին Մակի Չահթերեան եւ Վրէժ Թովմասեան:

Մակի Չահթերեան յանուն «Ահարոնեան» կեդրոնի վարչութեան եւ միութիւններուն բարի գալուստի խօսքը արտասանեց: Ան անհուն երախտագիտութիւն յայտնեց սրբազան հօր իր հայրական հոգատարութեան համար, որ իր ներկայութեամբ յոյս եւ կորով ներշնչեց դամաս-



կայացուցիչ Արմեն Ուրֆալեան, որ ջերմեռանդութեամբ ողջունեց Բերիոյ Հայոց Թեմի առաջնորդը դամասկահայութեան հետ ըլլալու եւ իր հայրական օրհնութիւնները բաշխելու համար:

Ան նախ արաբերէնով երախտագիտութիւն յայտնեց երկրի իմաստուն եւ քաջարի նախագահ տոքթ. Պաշար ալ-Ասատին մաղթելով անոր ուժ եւ

**Սոնա Անտրեան**  
**Շաբ.՝ էջ 9**



## Թուրքիոյ նուրջ

### Էրտողան Ռուսիոյ, շայաստանի եւ Ասրուբայանի ղեկավարներուն կ'տնայարկէ Արժանի Հարգով Բառակոմ Հանդիպում Կատարել

Ռուսական լրատուամիջոցներ կը հաղորդեն, որ Էրտողան առաջարկած է Արցախի հարցով Ռուսիոյ, Չայաստանի եւ Ասրուբայանի ղեկավարներու քառակողմ հանդիպում կատարել:

«Մենք առաջարկած ենք եռակողմ հանդիպում կատարել, նոյնիսկ՝ քառակողմ հանդիպում՝ Ղարաբաղի կացութեան վերաբերեալ իմ, Փուլինի, Ալիեւի եւ Փաշինեանի մասնակցութեամբ», ըսած է Էրտողան՝ ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովի նիստին մասնակցելու համար Նիւ Եորք մեկնելէ առաջ:

Էրտողան յայտնած է, որ մտադիր է հարցը քննարկել Ալիեւի հետ:

Անոր համաձայն, Անգարայի առաջարկին տակաւին արձագանգ չ'է եղած:



### «Ռոյթըրզ». «Տարածարժեքները կը Յետադգն Թուրքիոյ Մեջ Ռուսական Կազմին Հանդիպում Ծրագրերը»

Եւրոպայի մէջ կորսնցուցած վաճառքները փոխարինելու համար Թուրքիոյ մէջ «կազային հանգոյց» ստեղծելու Ռուսիոյ ջանքերը կը յետաձգուին, որովհետեւ տարակարծութիւններ կան, թէ ո՞վ զայն պետք է ղեկավարէ: Այս մասին «Ռոյթըրզ» լրատու գործակալութեան յայտնած են Նախագիծին ծանօթ երկու աղբիւրներ:

Ռուսիոյ Նախագահ Վլատիմիր Փուլին այդ գաղափարը առաջարկած էր Յուլիտեմբեր 2022-ին, Ռուսիան Պալեստինայի ճամբով Գերմանիոյ կապող կազմի «Յիւսիսային հոսք» խողովակաշարերու վնասումէն անմիջապէս ետք:



Ըստ «Ռոյթըրզ»-ի, կացութեան ծանօթ աղբիւրը ըսած է, որ կազային հանգոյցի ծրագիրը յետաձգուած է, որովհետեւ Մոսկուան եւ Անգարան կը վիճեն վերահսկողութեան շուրջ:

«Կան կառավարչական խնդիրներ. անոնք կը պայքարին այն բանի համար, թէ ո՞վ պետք է կառավարէ հանգոյցը», ըսած է աղբիւրը:

Ըստ լրատու գործակալութեան, այլ աղբիւր մը, որ «Մօտիկ Է Բրեւիլի-նի կողմէ վերահսկող կազային հսկայ «Կազպիոմ»-ին, խոստովանած է, որ կառավարման հարցերու առնչուած խնդիր կայ»:

www.kantsasar.com  
www.kantsasar.com  
www.kantsasar.com

### «ՉԱԵՐԵԱՆ» ԲԱՆԱԿՈՒՄ, ԿԱՅՏԱՉ, ԿՏՐԻՃ, ԵՌԱՆՈՒՄ

Այս կանչով կը սկսէր ու կ'աւարտէր Սուրիոյ Պատանեկան Միութեան (ՍՊՄ) «Չաւարեան» բանակումի իւրաքանչիւր օր: Այս տարի ՍՊՄ տարեկան բանակումի տեւողութիւնն էր՝ 21-27 Օգոստոս, կազմակերպութեամբ ՍՊՄ Ընդհանուր Վարիչ Մարմինին:

Ամէն տարի բանակումը կ'ունենայ իր խորագիրը, իսկ այս տարի Նուիրուած էր ՅՅԴ հիմնադիրներէն Սիմոն Չաւարեանին, որովհետեւ տարին կը զուգահիսէր անոր մահուան 110-ամեակին:

Բանակումին իրենց մասնակցութիւնը բերին 205 պատանիներ, հետեւեալ շրջաններէն՝ Յալէպ, Դամասկոս, Բեսապ, Լաթաքիա եւ Գամիշլի:



Նախքան բանակումի օրակարգերուն մեկնարկը, մասնակիցները բաժնուեցան խումբերու. որոնք անուանուեցան Նուիրուած էին Արցախեան գոյամարտի ընթացքին Նահատակուող մեր ընկերներուն՝ գիրքէն պատուով ոգեկոչելու եւ իրենց հայրենասիրութեան օրինակով տոգորուելու ողջ բանակումին ընթացքին:

Պատանիները 7 օրուան ընթացքին ստացան զանազան գիտելիքներ: Այդ գիտելիքները քաղեցին զանազան միջոցներով, ինչպէս՝ Դասախօսութեամբ, յեղափոխական դրուագներու պատմումով, գրոյցով, տեսերիզի, հարց պատասխանի եւ օգտաշատ խաղերու միջոցով: Այս կէտերուն կողքին պատանիներու օրուան առաջին օրակարգը կ'ըլլար մարզանքը, իրենց մտքին կողքին մարմնային առողջութիւն ապահովելու նպատակով:

Բանակումը չսկսած անհրաժեշտ էր, որ պատանիները ծանօթանային իրենց բանակումին խորագրի հերոսին, այդ պատճառով ալ առաջին դասախօսութիւնը Սիմոն Չաւարեանի մասին էր: Անոնք Նաեւ զանազան դասախօսութիւններու ընթացքին ծանօթացան ՅՅԴ Պատանեկան Միութեան առաքելութեան, Չայաստանի Չանրապետութեան կերտման պատմութեան, Չայ Յեղափոխական երգերու ծագումին, Արցախի հարցին, ինչպէս Նաեւ Չայ առաքելական եկեղեցւոյ Նուիրապետական այթոմներուն եւ յարանուանութիւններուն:

Բանակումի առօրեային անբաժանելի կէտերէն մեկն էր Նաեւ՝ յանձնախումբերու աշխատանքը, որ հաւաքական գործի կը վարժեցնէր մասնակիցները: Այս տարի ունեինք Նոր յանձնախումբեր՝ Յաղորդում ու տեսանկյալ պատրաստելու յանձնախումբ, որուն պարտականութիւններ էր օրական հերթականութեամբ տեսանկյալ պատրաստել ու տեղադրել միութեան դիմատետրի էջին վրայ: Ռատիոժամի յանձնախումբը օրուան ընթացքին հաճելի խաղերով, գիտելիքներով ու ազգային երգերով կը ճոխացնէր մըթնոլորտը: Խարոյկի յանձնախումբին պարտականութիւնն էր խարուկահանդեսին կէտերը պատրաստել, ինչպէս օրինակ՝ ազգագրական պար, թատրոն, ասմունք, Նուագ եւ մարզական բուրգ: Ունեինք Նաեւ յարգարանքի յանձնախումբ մը, որ մեր հիմնական հաւաքատեղիին՝ արեւանոցին պատերուն վրայ տեղադրեց մեր հիմնադիրներու, դաշնակցական Նուիրեալ անձնաւորութիւններու, Նահատակներու, Նեմեսիսի գործունէութեան եւ Արցախեան պատերազմի Նահատակներու, սուրիահայ Նահատակ ընկերներու Նկարներ, մեր պատանի ընկերներուն միտքերուն մէջ քանդակելու անոնց սիրանքները:

Պատանիները բանակումը աւարտեցին աւանդական խարուկահանդեսով: Ներկայացուած յայտագիրը բժախնդրօրէն պատրաստուած էր: Պատանիները միայն մէկ շաբթուան պատրաստութեամբ, պատասխանատուներու օգնութեամբ հաճելի եւ հետաքրքրական յայտագիր մը ներկայացուցին ու մթնոլորտը ճոխացուցին իրենց սորված յեղափոխական երգերով:

Ու հասաւ անսպասելի պահը, երբ պատանիները հրաժեշտ պիտի տային իրարու, իւրաքանչիւրը վերադառնալով իր բնակավայրը, յաջորդ տարի տեսնուելու յոյսով:

Բանակումները տարեկան գործունէութեան խտացումն են կարծեք, բնութեան գիրկը, հեռու ելեկտրականացած աշխարհէն, ուր դաստիարակչական ծրագրի մատուցման կողքին կը յառաջանան ընկերային ջերմ կապեր մասնակիցներուն միջեւ: Այդ կապերը երկար տարիներ իրենց ազդեցութիւնը կ'ունենան մեր ընկերային կեանքին մէջ:

Անժելա Գաղաթեան













Ռաֆֆի Միլիտեան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

-Սուրիոյ Ողումպիական հաւաքականը դուրս մնաց Ասիոյ U-23-ի մրցումներէն՝ 2-0 արդիւնքով պարտութեան մատուցելէ ետք Յորդանանի կազմէն:

-Հալեպի Ահլի եւ Տեր Չօրի ֆրոնտ խումբերը իրենց մասնակցութիւնը պիտի բերեն Ասիոյ ախոյեանութեան բաժակի մրցումներուն:



ՀԱՅԿԱԿԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԼԱԼԱՅԵԱՆ ՆՈՒԱԾԵՑ ԵՐԿՈՒ, ԻՍԿ ՍԻՄՈՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ՝ ՄԷԿ ՄԵՏԱԼ

Սեւուական Արաբիոյ մայրաքաղաք Ռիատի մէջ աւարտին հասաւ ծանրամարտի աշխարհի առաջնութիւնը: Վերջին պայքարին մաս կազմեցին գերծանրութիւն բարձրացնող ծանրորդները: Հայաստանը ներկայացնող Վարազդատ Լալայեան երկամարտի 460 քկ. ծանրութեան արդիւնքով երկրորդ տեղը գրաւեց եւ նուաճեց արծաթ մետալ: Ան պոկումի վարժութեան գրաւեց 3-րդ դիրքը եւ նուաճեց պրոնզէ մետալ: Հայաստանը

ներկայացնող երկրորդ մարզիկը՝ Սիմոն Մարտիրոսեանը, երկամարտի 450 քկ. ծանրութեան խաղին արդիւնքով զբաղեցուց 5-րդ հորիզոնականը: Սակայն ան արծաթէ մետալ նուաճեց հրումի վարժութեան: Հայաստանի հաւաքականի նախկին անդամ Գոռ Մինասեան, որ այժմ կը ներկայացնէ Պահրէյնը, 459 քկ. ծանրութեան մրցումին գրաւեց մրցանակային 3-րդ դիրքը: Ան արծաթէ մետալ նուաճեց հրումի վարժութեան: Մետալներու ընդհանուր քանակով Հայաստանի հաւաքականը զբաղեցուց 11-րդ դիրքը ապահովելով՝ 1 ոսկի, 4- արծաթ եւ 4 պրոնզ:



տեան, որ այժմ կը ներկայացնէ Պահրէյնը, 459 քկ. ծանրութեան մրցումին գրաւեց մրցանակային 3-րդ դիրքը: Ան արծաթէ մետալ նուաճեց հրումի վարժութեան: Մետալներու ընդհանուր քանակով Հայաստանի հաւաքականը զբաղեցուց 11-րդ դիրքը ապահովելով՝ 1 ոսկի, 4- արծաթ եւ 4 պրոնզ:

ՀԵՆՐԻԿ ՄԵՒԻՍԻՆԻԱՆ ԴԱՐՁԱՒ ԻՆՅՈՐ ԵՒ ՄԻԼԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԻ ԼԱՌԱԳՈՅՆ ԿԱՐԱՅՈՐԸ

Իտալիոյ լրատուամիջոցներուն համաձայն, Ինթըրը եւ Միլան խումբերու հանդիպումին լաւագոյն խաղացող ճանչցուած է Հայաստանի հաւաքականի նախկին աւագ խաղացող Հենրիկ Միսիսինիան, որ այդ խաղին յաջողած է նշանակել 2 կոլ, եւ կատարել մէկ կոլային փոխանցում՝ օգնելով կազմին տօսել մեծ յաղթանակ մը 5-1 արդիւնքով: Իտալիոյ մրցումներու Ա. շարքի 4-րդ փուլի գլխաւոր խաղին Ինթըրը իր դաշտին վրայ ընդունեց Միլանը: Ինթըրի առաջին կոլը նշանակեց Հայաստանի հաւաքականի նախկին խաղացող Հենրիկ Միսիսինիան, որ 5-րդ վայրկեանին կատարեց կոլերու բացումը: 38-րդ վայրկեանին, Մարկոս Թիւրամ կրկնապատկեց արդիւնքը: Երկրորդ կիսախաղին փորձուկացի կիսապաշտպան Ռաֆայել Լեաօն կրճատեց արդիւնքը, որմէ ետք Միսիսինիան իր բարձրորակ խաղարկութեամբ յաջողեցաւ անգամ մը եւս ցնցել մրցակիցին դարպասը, ինչպէս նաեւ իրեն կատարած փոխանցումին շնորհիւ Տեյվիտ Ֆրատես աւելցուց կոլերուն հաշիւը: Այս յաղթանակէն ետք, Ինթըրը 12 կետով գրաւեց աղիւսակին առաջին դիրքը:



տեան, որ այժմ կը ներկայացնէ Պահրէյնը, 459 քկ. ծանրութեան մրցումին գրաւեց մրցանակային 3-րդ դիրքը: Ան արծաթէ մետալ նուաճեց հրումի վարժութեան: Մետալներու ընդհանուր քանակով Հայաստանի հաւաքականը զբաղեցուց 11-րդ դիրքը ապահովելով՝ 1 ոսկի, 4- արծաթ եւ 4 պրոնզ:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 456)

Պատրաստեց՝ Մարինա Զիւլբօշեան-Պօղիկեան

Crossword grid for puzzle 456 with 12 columns and 12 rows.

Հորիզոնական

- 1- Հոգատար:
2- Հակառակ՝ առարկայ: Իրերայաջորդ տառեր: Յուցական դերանուն:
3- Ճամբայ: Ձայնանիշ: Հացի կտոր:
4- Հաց: Եւս: Հակառակ՝ աղբիւր:
5- Հակառակ՝ շողկապ: Ծայր:
6- Իգական անուն: Առաջին կինը:
7- Տղամարդ: Լեռնաշղթայ:
8- Հակառակ՝ ծածկոյթ: Գէր:
9- Դպրութեան աստուածը: Խօսք:
10- Պէս, միածել:
11- Շող արձակել: Շարունակ:
12- Հակառակ՝ ժամանում: Տառի մը անունը:

Ուղղահայեաց

- 1- Տեսակ-տեսակ նիւթերէ կազմուած խառն հաւաքածոյ:
2- Աղբիւր: Գրաբար՝ ո՞ր: Վախճան:
3- Ահ ու վախի օրեր: Յաւելում:
4- Արգելական: Տառի մը հարեանները: Փոքր տուն:
5- Ձայնանիշ: Արեւ: Հակառակ՝ եական բայ:
6- Ժառանգ ձգել: Հակառակ՝ վատ:
7- Տարածքի միաւոր: Յոգնակերտ մասնիկ:
8- Ապաստան տալ:
9- Սշուշ: Տարածքի միաւոր:
10- Ծերերուն խնամք տուող:
11- Զիջ: Հակառակ՝ տարածքի միաւոր: Կրկնուած ձայնաւորներ:
12- Անդրանիկ Ծառուկեանի բանաստեղծական հատորներէն:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 455)

Crossword grid for puzzle 455 with 12 columns and 12 rows, containing letters.

ԼՈՒՐԵՐ

Երևոյնքութիւն 25/9



21° 36°

Երեւոյնքութիւն 26/9



19° 35°

Չորեւեցութիւն 27/9



20° 34°

Հինգեւեցութիւն 28/9



19° 34°

Ուրբաթ 29/9



20° 34°

Շաբաթ 30/9



20° 36°

Կիրակի 1/10



21° 35°

## «Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ» ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ՆՈՐՈԳՈՒԱԾ ԿԵԴՐՈՆԻՆ ԲԱՅՈՒՄԸ ԿԱՏԱՐՈՒԵՅԱԼ

Կիրակի, 17 Սեպտեմբեր 2023-ի յետմիջօրէին, Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Ս. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի նախագահութեամբ բացումը կատարուեցաւ «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» Կիրակնօրեայ Դպրոցի նորոգուած կեդրոնին, ներկայութեամբ՝ Ազգ. Իշխանութեան եւ ազգային մարմիններու անդամներու եւ «SALT» բարեսիրական հաստատութեան ներկայացուցիչներու:



Յիշենք, որ եկեղեցասիրաց եղբայրակցութեան նախկին կեդրոնը «SALT» բարեսիրական հաստատութեան կողմէ նորոգուելով յանձնուեցաւ «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» Կիրակնօրեայ Դպրոցին:

Կիրակնօրեայ Դպրոցի ընդ. տեսուչ Արժ. Տ. Չարեհ Զինյ. Շաքարեան բացման խօսք արտասանեց եւ ամփոփ գծերու մէջ տեղեկութիւն տուաւ Կիրակնօրեայ Դպրոցին առաքելութեան եւ գործունեութեան մասին: Ան շնորհակալութիւն յայտնեց «SALT» հաստատութեան, Թեմի Կալուածոց Հոգաբարձութեան, Կիրակնօրեայ Դպրոցի ուսուցչական կազմին եւ երիտասարդ ուսուցիչ Յակոբ Շաքարեանին՝

վերաց տաղաւար տօնին, որ յաղթանակի տօն է քրիստոնեաներու համար:

Մակար սրբազան դիտել տուաւ, որ Կիրակնօրեայ Դպրոցէն ներս կրօնական դաստիարակութեան կողքին ազգային արժեքները կը փոխանցուին մեր զաւակներուն, որոնց նկարագիրը կազմաւորուելով տիպար հայորդիներ կը դառնան:

Սրբազան Հայրը փառք տուաւ Ամենակալ Աստուծոյ եւ շնորհակալութիւն յայտնեց «SALT» բարեսիրական հաստատութեան, Ազգային Իշխանութեան, Ազգ. Վարչութեան անդամ Փիեռ Մուսալիին, Նպաստից Մարմինի անդամ Յարութ Հայրապետեանին, Կալուածոց Հոգաբարձութեան եւ անոր ատենապետ Կարախ Մարաշեանին, Կիրակնօրեայ Դպրոցի ընդ. տեսուչ Արժ. Տ. Չարեհ Զինյ. Շաքարեանին եւ Կիրակնօրեայ Դպրոցի ուսուցչական կազմին:

Սրբազան Հայրը փառք տուաւ Ամենակալ Աստուծոյ եւ շնորհակալութիւն յայտնեց «SALT» բարեսիրական հաստատութեան, Ազգային Իշխանութեան, Ազգ. Վարչութեան անդամ Փիեռ Մուսալիին, Նպաստից Մարմինի անդամ Յարութ Հայրապետեանին, Կալուածոց Հոգաբարձութեան եւ անոր ատենապետ Կարախ Մարաշեանին, Կիրակնօրեայ Դպրոցի ընդ. տեսուչ Արժ. Տ. Չարեհ Զինյ. Շաքարեանին եւ Կիրակնօրեայ Դպրոցի ուսուցչական կազմին:



իրենց բերած ներդրումին համար: Այնուհետեւ, պաստառի վրայ ցուցադրուեցան ուսուցչական կազմին կողմէ պատրաստուած Կիրակնօրեայ Դպրոցի գործունեութենէն պատկերներ:

Ապա, գեղարուեստական յայտագիրով հանդէս եկան Կիրակնօրեայ Դպրոցի երիտասարդ ուսուցիչները՝ երաժշտական կատարումներով եւ աղօթքի արտասանութեամբ:

Սրբազան հայրը իր սրտի խօսքը արտասանեց: Ան Կիրակնօրեայ Դպրոցի կեդրոնին բացումը կրկնակի ուրախութիւն համարեց, նկատի ունենալով, որ կը գուգադիպի հաջ-

րակնօրեայ Դպրոցի ուսուցչական կազմին:

Մակար սրբազան մաղթեց, որ կեդրոնը իր նպատակին ծառայէ եւ Կիրակնօրեայ Դպրոցին գործունեութեան կողքին երիտասարդական համագումարներ, աստուածաշնչական սերտողութիւններ եւ կանացի լսարաններ հիւրընկալէ:

Ապա, Սրբազան Հայրը անգլերէն լեզուով շնորհակալական խօսք ուղղեց «SALT» բարեսիրական հաստատութեան ներկայացուցիչներուն:

Աւարտին, տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

## ՎԵՐԱՅՄԱՆ ՍՐԲՈՅ ԽԱՉԻՆ ՏԱՂԱԽԱՐ ՏՕՆԸ ՅԻՇԱՏԱԿՈՒԵՅԱԼ ՀԱԼԵՊԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵԶ

Կիրակի, 17 Սեպտեմբեր 2023-ին, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին կը յիշատակէ Վերացման Սրբոյ Խաչին տօնը, որ հինգ տաղաւար տօներէն վերջինն է եւ խաչին նուիրուած չորս տօներէն մեծագոյնն է:



Արդարեւ, Բերիոյ Հայոց Թեմի

խափանեց եւ կեանքի ու յոյսի բոլոր տարածեց մարդկութեան մէջ:

Մակար Սրբազան հաւատացեալներուն պատուիրեց, որ Աստուծոյ եւ մարդոց հետ իրենց յարաբե-

րութիւնները հիմնէն անշահախնդիր սիրոյ, ողորմութեան եւ ծառայութեան վրայ, որոնք մեզի կը փոխանցուին Խաչին եւ Խաչեալին ճամբով:

Սրբազան Հայրը Ս. Խաչին առաջնորդութիւնը խընդրելով աղօթեց՝ որչափ հարիւր, Հայաստանի, Արցախի, Սուրիոյ, Միջին Արեւելքի եւ բոլոր մեծամեծներուն համար, հրաւիրելով հաւատացեալները աղօթքի եւ ապաշխարութեան ճամբով զգաստանալու եւ վերականգնելու իրենց հաւատքը, որպէսզի Աստուած Ս. Խաչին զօրութեամբ հրաշքներ գործէ մեր կեանքէն ներս:

Յընթացք Ս. Պատարագին, Սրբազան Հայրը աւանդաբար ռեհանի օրհնութիւն կատարեց: Պատարագէն ետք, տեղի ունեցաւ Խաչի թափօր եւ անդաստանի արարողութիւն, որուն ընթացքին աշ-



Բարեջան Առաջնորդ Գերշ. Ս. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի հանդիսապետութեամբ, Խաչվերաց տօնին նուիրուած Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցուեցաւ: Պատարագիչն էր Արժ. Տ. Չարեհ Զինյ. Շա-



քարեան: Սրբազան Հայրը իր հայրական պատգամին մէջ պարզաբանեց Խաչվերաց տօնին խորհուրդը, դիտել տալով, որ Զրիստոս Խաչին ճամբով մեղքը խորտակեց, մահը



խարհի չորս ծագերը օրհնուեցան: Հաւատացեալները, հոգեպարար արարողութեան ընթացքին, Ս. Խաչին ներգործող զօրութիւնը հայցեցին եւ օրհնուած ռեհան ստանալով եկեղեցիէն մեկնեցան: